ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՌԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

2018թ. դեկտեմբերի 28-ին Գոռավանի համայնքապետարանում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2018թ.-ի երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ հանրային լսում:

Նախագահում էր համայնքի ղեկավար Ա. Բազիկյանը, քարտուղարում էր աշխատակազմի քարտուղար Ն. Օհանյանը:

Մասնակցում էին ավագանու անդամներ, համայնքի աշխատակազմի աշխատակիցներ, <<Գոռ մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրեն Գ . Ամիրջանյանը, մանկապարտեզի ու դպրոցի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

Լսեցին- Արարատի մարզի Գոռավան համայնքի ղեկավար Ա. Բազիկյանի հաշվետվությունը 2018թ. երկրորդ կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ:

Արձանագրվեց, որ
հաշվետու ժամանակահատվածում Գոռավանի գյուղապետարանը ստացել է 73 դիմում, տրամադրել է 381 տեղեկանք, ավագանիները ընդունել են 27 քաղաքացիների: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների կողմից ընդունելությունների ընթացքում բարձրացված խնդիրները քննարկվել են և աշխատակազմի կողմից տրվել են համապատասխան լուծումներ:
Համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 44 որոշում և 12 կարգադրություն:
Հրավիրվել է ավագանու 4 նիստ, քննարկվել է 14 հարց, որից 9-ը նորմատիվ:

Համայնքում իրականացվել են մի շարք սոցիալ-տնտեսական ծրագրեր:

1. *2018 թվականի 2-րդ կիսամյակի ընթացքում համայնքի վարչական տարածքում իրականացվել են սանմաքրման աշխատանքներ: Սեպտեմբերի 8-ին հայտարարվել է շաբաթօրյակ: Մաքրվել են փողոցները, ոռոգման առուները, մշակույթի տան, դպրոցի և գյուղապետարանի վարչական շենքի շրջապատը:*
2. *Անապահով ընտանիքներին տրվել է նպաստ 1855.0հազ.դրամ:*
3. *Մահացածների հարազատներին տրվել է հուղարկավորության նպաստ 970,0 հազ. դրամ:*
4. *Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված՝ Գիտելիքի օրվան, Հայաստանի Հանրապետության անկախության 27-ամյակին:*
5. *Նոյեմբերի 22-ին կազմակերպվել են միջոցառում՝ նվիրված Գոռավանի հիմնադրման օրվան: Դեկտեմբերի 28-ին Գոռավանի մշակույթի տանը անցկացվել է Ամանորի հանդես և մինչև 4-րդ դասարանի բոլոր երեխաներին տրվել են նվերներ:*
6. *Ամանորյա տոների կապակցությամբ գյուղամիջյան և կենտրոնական փողոցները զարդարվել են նոր տարվա լուսատուներով:*
7. *Անապահով ընտանիքների երեխաներին տրվել է ուսման վարձի նպաստ 150,0 հազ դրամ:*
8. *Հասարակական կազմակերպություններին տրվել են.*
   - *<<ՀՀ Պատերազմի աշխատանքի և զին. ուժ. Արարատի մարզ. խորհ. >> 15,0 հազ. դրամ*

Համայնքի ղեկավար՝ **Ա. ԲԱԶԻԿՅԱՆ**